

ՔԱՆԱՔԵՌԻ ՎԻՄԱԳՐԻ «ՄԵՂՈՒՆԱ» ՎԱՐՉԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի սոցիալական ու տնտեսական պատմությունն ուսումնասիրելիս առանձնակի կարևորություն է տրվում առուծախի գործառնություն ներկայացնող վավերագրերին, որպիսիք, ցավոք, շատ շքն պահպանվել։ Առավել հազվագյուտ են այն դեպքերը, երբ նման բովանդակություն ունեցող բնագրերը փորագրվել են պաշտամունքային կառույցների ու կոթողների որմերին և մեզ հասել արձանագրությունների տեսքով։ Այդ քչերից մեկը Քանաքեռի որմնափակ խաչարձանի հարավային կողմի վիմագիրն է, որի վերծանությունն ու քննությանը հայագետները բազմիցս են անդրադարձել։ Հ. Շահ-խաթունյանցը, Մ. Սմբատյանն ու Ղ. Ալիշանը հրապարակել են բնագիրը, Կ. Կոստանյանցը համադրել է առկա հրապարակումները¹ և այնուամենայնիվ՝ Թադ. Ավդալբեգյանն այն կոչել է «մթին արձանագրություն», փորձելով ուղղել Կ. Կոստանյանցի ժողովածույից քաղված տեքստը²։ Վիմագրի լուսանկարով ու գրչանկարով ուղեկցվող ի նորո վերծանություն կատարել է Կ. Ղաֆադարյանը և առանձին ծանոթագրությամբ պատճառաբանել իր սրբագրումները³։ Ս. Ավագյանի գնահատությամբ, սակայն, Կ. Ղաֆադարյանի հրապարակումը ևս «շատ քիչ բանով է տարբերվում անցյալ դարում կատարված հիշյալ վերծանություններից, իսկ տեղիների բացահայտման առումով ավելի սխալաշատ է»⁴։ Ի հավաստումն իր որակումի՝ Ս. Ավագյանը Կ. Ղաֆադարյանի ընթերցումն ստուգել է խաչարձանի վրա եղած բնագրով և առկա վրիպումների ու տարբերությունների ցանկ կազմել։ Արձանագրության մեր կողմից ստուգված տեքստն այս է.

« + Յանուն (ստուծոյ) ես՝ Պարսիմ [ս եւ ուր] զի իմ ճան[ն]ս եւ մայր իմ եւ փրկի իմ Մաթո/ւքս, Նասխաթունս ծախեցաք մեր սրտի յաւժառուութեամբ զմեր հայրէնիք այգիս / Պէտէանիւն, ԳՈՒ ԲԾ սպ[իտակ] անպակաս առաք։ Ա(ստուա)ծ շնահատուր առնէ հալալ հայրէնիք՝ լուրդեցէ յուրդիք։ Ոչ ում դաւի չիա՝ ոչ մերոց, ոչ ատաւաց. ով դաւի անէ՝ ՅժԸ-ից / նգոված [է], տուգանք աա Մ դէկ(ան)։ Թվիս ԶԺԵ։ Վկա ա(ստուա)ծ եւ Ադուլափն, Կուլալն, Տիր/էրն, Վահրամ, Մանթն, Դաւիթ, Առաքեյն, Կարապետն, Սանփանոս, Մխիթար վ(ա)րդ(ապետն), Խոցադեղ, / Դեղ, Յակոբ, Աշրափն խաչէնեցի, Վարհամ, Գերգ, Սնպատ, Բարսեղ Էրէց, Ամիրդաւան քջ/նեցի եւ Մխիթարի Էրէց, ու զգիրս գրեցի։ Դանիակն ՅԻ (ս)պ(իտակ) ի պարուն եւ Մ (ս)պ(իտակ) շանն/անի եւ մեղունանի»։

Հավաստիանալու համար, որ առուծախ վավերացնող այս բնագիրը կազմված է ժամանակի իրավահարաբերությունների ու նորմերի պահպան-

1 Յ ո վ հ. Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն ց. Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն կարարատայ. հ. Բ, էջմիածին, 1842, էջ 159—160։ Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Վեհատիկ, 1890, էջ 298։ Մ. Ս մ բ ա տ յ ա ն ց. Տեղագիր Գեղարքունի ժովագարդ գաւառի. Վաղարշապատ, 1895, էջ 207—208։ Վիմական տարեգիր, կազմեց՝ Կ. Կոստանյանց. Ս.—Պետերբուրգ, 1913, էջ 109։

2 Թ ա դ. Ա վ գ ա լ բ ե գ յ ա ն. Հայագիտական հետազոտութիւններ. Երևան, 1969, էջ 315։

3 Կ ա Ր Ո Ղ ա ֆ ա դ ա Ր յ ա ն. Երևան, միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները. Երևան, 1975, էջ 208—209։

4 Ս. Ա. Ա վ ա գ յ ա ն. Վիմական արձանագրությունների բառաքնություն. Երևան, 1978, էջ 59—60։

մամբ և նման գործառնությունները օրինական ճանաչելու մշակված բանա-
ձևայնությամբ, անհրաժեշտ ենք համարում բերել Քորալյալմանքի այրերից
մեկում վերջերս հայտնաբերված և նույնպես առուծախ վավերացնող մի փաս-
տաթուղթ, գրված հայոց ՉՀԴ (1325) թ.:

ՇՅ. Յանուն աստուծոյ այս իմ գիր է՝ Եվանիս ուղոյս Սարգսի, որ էտվի
Խարսդիս ու իր աղբերացն ու ծախսեցի զիմ դափն. որ վերայ յիրանեցն էր, ու
առի զիմ հալալ գինն ժե սպիտակ. Եմես սացան հերենիք եւ յազգէ յազգ, յուր-
դեցէ յուրդիք, թոռն ի թոռն: Ով էլ զիրար տայ ու սացանէ նանել ջանայ՝ նգո-
ված է յաստուծոյ եւ յամենակայլէն եւ ի Քրիստոսի խաչելութենէ, քաղմանէն,
յարութենէն, յուր ար[սւր] յազոռք բանէն, Մ սպիտակ տուգանք տայ: Վկայ է
աստուած, ի մարդկանէ՝ ձեռնատն (ձեռնաւորն—Պ. Մ.) Թաւտարէն, տանու-
տէր Խոջայդեղն, Մուլայդեղն, Մխիթար, Տոնականն, Պարսամն եւ Դաւիթ Երեց
եւ Տիտոս, որ զգիրս գրեցի: Հաստատ է կաման աստուծոյ: Թվին ՉՀԴ, տրէի
Ին գրեցաւ»⁵:

Ազգային կենտրոնացած պետականության բացակայության պայմաննե-
րում միջնադարում միշտ չէ որ ճանաչվում կամ հարգվում էին հողատիրության
կամ հողօգտագործման ժառանգական իրավունքները, ուստի հաճախ հողի ու
ջրի շուրջ տեղական վեճեր էին զնում: Սեփականության նկատմամբ իրենց
իրավունքը պահպանելու համար հողատերերը ձգտում էին ունենալ եթե ոչ
թագավորական կամ իշխանական, ապա գոնե տեղական պաշտոնեություն կող-
մից հոգևորականության ու համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ
վկայված կալվածագրեր, նվիրագրեր, արտոնագրեր և այլն: Առանձին դեպ-
քերում տասնամյակներ ու հարյուրամյակներ առաջ տրված պաշտոնագրերը
հաստատվում ու վերահաստատվում էին նորօրյա իշխանավորների, հոգևոր
պետերի ու ձեռնավորների կողմից: Եվ քանի որ վավերագրերի դիվանական
պահպանությունը հարափոփոխ քաղաքական կացության պարագաներում
ապահովված չէր, վանական հաստատությունները ջանում էին մանր ու մեծ
գործառնություններին վերաբերող վավերացումները գրառել հաստատուն
գործածություն ունեցող ձեռագիր մատյանների ազատ էջերին ու լուսանցնե-
րին, երբեմն նաև ունենալ հատուկ Մայր կամ Հոգոց գրքեր, ուր ժամանակի
ընթացքում գրանցվում ու հավաքվում էին նման նյութերը⁶: Պահպանությունն
ապահովող գերադասելի եղանակներից մեկն էլ պաշտամունքային կառույց-
ների որմերին իբրև արձանագրություն փորագրելն էր, որ կատարվում էր,
պիտի ենթադրել, հատուցման որոշակի պայմանով⁷: Մեզանում, քաղաքական
պայմանների ու ավանդույթի թելադրանքով, վավերագրի հրապարակման և
օրինականության երաշխավորման առավել ընդունված եղանակներից մեկը
ճիշտ այս էր՝ որմերին փորագրելը: Ուստի Քանաքեռի խաչարձանի մեզ զբա-
ղեցնող վիմագիրը բացառիկ որևէ իրողություն չէ, թեև իր բովանդակությամբ
այն հիրավի «կարևոր ու հազվագյուտ» է, ինչպես նրան բնութագրել է արձա-
նագրության վերջին հրատարակող հանգուցյալ Ս. Ավագյանը⁸:

5 Մաշտոցի անվ. Մատենադարան, հայերեն պատուիկ ՁԶ 2030, Ի դեպ, այլ իրողություն-
ների թվում այստեղ ուշագրավ են տեղական բարբառային ձևերը (էտվի, աղբերացն, սացան,
գիրար տալ, յուր), ինչպես նաև Եմես տեղանունը, որ աղբյուրներում առաջին անգամ է հան-
դիպում և մասնակի փոփոխությամբ մինչև այսօր էլ գործածական է Արավերդու բնակիչների
խոսվածքում:

6 Նման բովանդակության պահպանված և լավագույն գրչագրերից մեկը Սանահնի նշանա-
վոր Քթեթունն է, որ մենք պատրաստել ենք տպագրության:

7 Պետեանի և Պարսիմի առուծախի գիրը վիմագրի տեսքով հրապարակելիս հատուցման
անհրաժեշտություն չկար, որովհետև հուշարձանը կանգնեցրել է ինքը Պետեանը ՉԺԴ (1265) թ.:
Շինարարական արձանագրության գրողը նույն Մխիթարին է, որ մեկ տարի հետո որպես
ձրեց է հիշվում:

8 Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 59:

Մասնագիտական գրականության մեջ արդեն նկատված է այս արձանագրության բովանդակած տվյալների կարևորությունը միջնադարյան Հայաստանի տնտեսական, սոցիալական ու վարչական պատմության համար, մասնավորապես այն, որ առուծախի ժամանակ մասհանում է կատարվել ինչպես տեղական պարոնին (արժեքի մեկ տասներորդի շափով՝ դահիակ), այնպես էլ շահնա և մեղունա պաշտոնյաների օգտին (3200 սպիտակից 50 արծաթ դահեկան)⁹։ Շահնան կարգուկանոնը հսկող ոստիկանական պաշտոնյա էր, որի օգտին գանձվում էր հատուկ հարկ՝ շահնահակ¹⁰, իսկ մեղունայի խինչ պաշտոնյա լինելը դեռևս պարզված է¹¹։ Թագ. Ավդալբեգյանն այս անձանոթ տերմինն առաջարկում է կարդալ «տեղու նայիր»¹², սակայն Ս. Ավագյանի արդարացի դիտողությամբ «այդ վերծանությունն արհեստական է, քանի որ տեղում, քարի վրա այդպիսի դրեր չկան»¹³։ Կ. Ղաֆադարյանը շահնա և մեղունա տերմիններն ընդունել է իբրև հատուկ անուններ, թեև Թագ. Ավդալբեգյանը վաղուց էր ճշգրտել, որ դրանք իբրև այդպիսին «երևակայական են»¹⁴։ Մի քանի տարի առաջ, Ս. Ավագյանի «Վիճակն արձանագրությունների բառաքնություն» գիրքը գրախոսելիս, տողերիս հեղինակը անցողակի նկատել էր, թե «մեղունան ուրիշ բան չէ, քան վրաց իրականությունից հայտնի մեղունեն/մեղվինեն-ն»¹⁵։ Այժմ անհրաժեշտ է մասնավորեցնել, թե ի՞նչ պաշտոնյա էր մեղունա/մեղվինեն-ն, ե՞րբ է հանդես գալիս և ի՞նչ աղբյուրներից է հայտնի։ Հնագույն վրացական վավերագիրը, ուր հիշատակված է մեզ զբաղեցնող պաշտոնյան, Դեմետրե Անձնուրացի որդի Դավիթ Թագավորի 1297/98 թ. տված նվիրագիրն է, ուր կարդում ենք. «Այժմ, մեր սուլյն հրամանն ու սիգելը ովքեր էլ որ տեսնեք՝ մեզանից հետո գալիք Թագավորներդ, մեր արքունիքի վեզիրներդ ու մովրավներդ, էրիսթավաց-էրիսթավներդ, էրիսթավներդ, Քարթլիի էրիսթավներդ, Ժինվանի պատրոններդ և մովրավներդ ու ամիրաներդ, գողորսներդ, հացահատիկա[հարկ] հավաքողներդ, բանջարավորներդ, մեղունեններդ, բաղնավորներդ, որսորդներդ, ձիապաններդ, հետիոտներդ, զբաղավորք (մեսադիվաղե) և մեր ամենայն գործավորներդ՝ մեծերդ ու փոքրերդ, հաստատեցեք, և ոչ ոք չխանգարի մեր սուլյն հրամանն ու սիգելը։ Նվ ոչ էլ ոքդ բան պակասեցնեք՝ ոչ մեծդ և ոչ փոքրդ, այլ միայն օժանդակություն և պաշտպանություն [ցուցաբերեք]»¹⁶։ Այստեղից ինքնին պարզ է, թե մեղունեն-ն ևս արքունիքի կողմից տեղում նշանակվող պաշտոնյա է, որ վկայակոչված վավերագրում բնութագրված է իբրև Տաթևի թոշմեղու (բառացի՝ գործ կատարող, գործավոր)։ Ուրիշ բնագրերում նման թվարկումից հետո կիրառված է նաև Յեղուսանո տերմինը (հին վրացերենում՝ ձեռնավոր, նորում՝ արհեստավոր)¹⁷։ Ուրեմն՝ մեղունա/մեղվինեն-ն ձեռնավոր է, որի պարտականությունը գինու կամ խաղողի հետ կապված հարկի հավաքումն է, իսկ այդ-

⁹ Թագ. Ավդալբեգյան. նշվ. աշխ., էջ 314—315։ Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 209։ Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 58—62։

¹⁰ Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 171—173։ Ալ-Ֆահիհի և ալ-Ֆարիդի տեղեկությունները շահնայի մասին քննության են առնված վրացագիտական գրականության մեջ։

¹¹ Յ. Յեսևոյ, Տաթևի թոշմեղու, Ե. Ի. տե., 1982, թ. 271—274; Յ. Գաբաշվիլի տեղեկությունները մեղունայի մասին ընդհանուր առմամբ վրացագիտական գրականության մեջ։

¹² Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 62։

¹³ Նույն տեղում։

¹⁴ Թագ. Ավդալբեգյան. նշվ. աշխ., էջ 315։

¹⁵ «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 204։

¹⁶ Երանդուկի օրագրությունը IX—XIII դդ., Պետքոյի և Գաբաշվիլի մոմենտալներ։ Ե. Յեսևոյ, Տաթևի թոշմեղու, Ե. Ի. տե., 1982, թ. 271։

¹⁷ Տե՛ս նույն տեղում, № 1 և № 46 վավերագրերը։ Տերմինի մասին տե՛ս Յ. Յեսևոյ, նշվ. աշխ., էջ 15—25։

Քանաքեռի խաչարձանի արձանագրությունը նշանակալիորեն ընդլայնում է մինչև այժմ սկզբնաղբյուրներից ունեցած մեծ տեղեկությունները մեղունների ծառայության, նրա օգտին զանձմուղ հարկի և պաշտոնավարության վայրի սասին: 1266 թ. Քանաքեռում մեղուններ/մեղունայի ներկայությունը ապացույց է, որ Զաքարյանների օրոք վրաց պետականության ոլորտ ընդգրկված Արևելյան Հայաստանում գործում էին այդ պետության վարչական կառուցվածքին հատկորոշ պաշտոնյաներ: Հայտնի է դառնում նաև, թե աստիճանաբար անդի է ունեցել մեղուններին տրված իրավունքների ու արտոնությունների ընդլայնում: այլևս նրանց հասար մասհանում է կատարվում ոչ միայն գինեհարկից, այլ նաև առուծախի գործառնությունից: Նոր աղբյուրներ են հաղկավոր, որ պետի կարելի լինի ճշգրտել՝ խոսքը ամեն անսակ խոշոր առուծախի՞ն է վերաբերում, թե՞ միայն այդուն, ուր խաղող էր մշակվում և որից գինու մասհանում էր սպասվում:

Հետտղայում, XVI—XVIII դդ., դատելով Վախտանգ VI-ի «Դաստուրլամալի» տվյալներից²⁴, մեղունների իրավասությունների ու պարականությունների էական փոփոխություն է կատարվում: այդ պաշտոնն զբաղեցնող մարդիկ դառնում են արքունի սովորական սպասավորներ՝ գինի մատուցողներ, և ամենահին պատահական չէ, որ «Նոր Քարթլիս ցխավրեբայում» մեղուններ տերմինը պարզապես մատուցվել է նշանակում²⁵:

Մեղուններ/մեղունա վարչական տերմինի գործածությունը Քանաքեռի վիճագրում ապացույց է, թե մինչև Զաքարյան շրջանի Հայաստանի վարչական կառուցվածքը պաշտոնական այդ ինստիտուտը լի ունեցել, ուստի XIII դարում, երբ Զաքարյանները իրենց իշխանական աան վարչական կառուցվածքը կերտում էին վրաց արքունիքի նմանողությամբ, ընդօրինակվեց նաև այդ պաշտոնը, պահպանելով և տերմինը: Թերևս նրանք էր մեղունա գործածել թարգմանարար՝ գինեուր, բայց այդ չի կատարվել, քանի որ հայկական հիշյալ տերմինը՝ վաղուց հայտնի էր այլ նշանակությամբ՝ գինեվաճառ²⁶:

АДМИНИСТРАТИВНЫЙ ТЕРМИН МЕГУНА В НАДПИСИ ИЗ КАНАКЕРА

Доктор ист. наук П. М. МУРАДЯН

Резюме

Датированная 1266 г. надпись на южной грани крестного памятника в Канакере издавалась неоднократно (И. Шахатунянц, Г. Аляшан, М. Смбатянц, К. Костанянц, К. Кафадарян, С. Авакян). Уникальность надписи заключается в фиксации частной сделки—купли-продажи сада с указанием процентов суммы, выделяемых функционировавшим в Канакере административным лицам—парону, шахне и мегуне. В специальной литературе значение термина *мегуна* не установлено. Учет специфики административного строя Грузии XII—XIII вв. и ее отражение во включенной в состав объединенного грузинского государства Армении эпохи Захаридов позволяют установить, что в канакерской надписи наряду с термином *шахна* (полицейский представитель) фигурирует *мегунне*—надзиратель над виноделием и оборщик причитающейся царскому или княжескому двору доли. Канакерская надпись свидетельствует, что в функциях *мегунне* произошли некоторые изменения; теперь этот представитель администрации был вправе контролировать также куплю-продажу садов и получать соответствующую долю от общей суммы.

²⁴ Տե՛ս յնթադրյալ խմբագրություն, II, 83, 252, 253, 258.

²⁵ Յ. Գ. II, 351, 388.

²⁶ Դիվան հայ վիճագրության. Ա, Անի քաղաք, կազմեց՝ Հ. Ա. Օրբելի. Երևան, 1966, էջ 37: